

տեսնէինք կարմրաներկ հաւկիթներ ալ, իբր սեպհական նոյն տօնին: Չայս կը յիշեն Տաթեւացին եւ Յհ. Եզնկացին: Առաջինը կ'ըսէ, թէ ճրագալուցի շաբաթ օրը «ձռ ներկեմք կարմիր»: Եւ թէ «միայն ի տօնի գատկիս ներկեմք ձռ»: Ինքն ասոր խորհրդաւոր նշանակութիւն մ'ալ կու տայ, համարելով զձռն օրինակ «բոլոր աշխարհի», համաձայն իմաստնոց՝ որոնք անոր կեղեւը, երկնից նմանեցուցին, մզնածեւը կամ մաշկը՝ օղին, սպիտակուցը՝ ջրոյ, եւ դեղինը՝ երկրիս: Իսկ «ներկն նշանակէ՝ թէ բոլոր աշխարհս Քրիստոսի արեամբ գնացաւ. զոր մեք ի ձեռն առեալ՝ յայտնապէս զփրկութիւն մեր քարոզեմք» (Քրգ. ձմր. 606):

Գեղեցիկ է այդ մեկնութիւնը: Բայց մեք գիտենք՝ որ ձուին տրուած այդ կարեւորութիւնը քրիստոնէութենէն հին է: Եզգիպոս, Յունաստան եւ Հռովմ գարնան սկիզբը ձու կը նուիրէին աստուածոց՝ իբրեւ խորհրդանշան արգասաւորութեան: Պարսկաստան եւ Հնդկաստան նուիրական կը համարէին զայն, եւ կապած էին աշխարհի ստեղծման աւանդութեանց հետ: Պարսիկները նոյնը զունաւորած՝ իրարու կ'ընծայէին. եւ Հրեայք իրենց պասեքին կը ճաշակէին զայն խորոված: Եւրոպա